

եկել ՀՍՍՀ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Վ. Կ. Չալոյանը, Ա. Բ. Բաղդասարյանը, պրոֆեսորներ Գ. Բ. Պետրոսյանը, Ա. Փ. Հարությունյանը, Բ. Ս. Քումանյանը և ուրիշներ: Գիտության պատմության միջազգային XIII կոնգրեսում, որը տեղի ունեցավ 1971 թ. Մոսկվայում, Հայաստանից մասնակցեց 25 մարդ, այդ թվում 7-ը հանդես եկան զեկուցումներով: Վերջին, XIV կոնգրեսում (1974, Ճապոնիա) «Հայ-բյուզանդական կապերը միջինադարյան երևադարձում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը:

Ավանդական են դարձել գիտության պատմության անդրկովկասյան կոնֆերանսները, որոնք հաջորդաբար տեղի են ունենում Երևանում, Քրիլիսիում և Բաքվում՝ երեք հանրապետությունների, ինչպես նաև միութենական այլ քաղաքների գիտության պատմաբանների մասնակցությամբ: Դրանցից առաջին և ընդհանուր կոնֆերանսները անց են կացվել Երևանում (1965 և 1972 թթ.): Երկու կոնֆերանսի նյութերն էլ հրատարակվել են առանձին գրքերով: Հայ գիտնականները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև գիտության պատմության անդրկովկասյան II և III կոնֆերանսներին, ըստ որում II կոնֆերանսում (1967, Բաքու) Հայաս-

տանից կարդացվել է 12 զեկուցում, իսկ III-ում (1969, Քրիլիսի)՝ 26 զեկուցում:

Խորհուրդն իր գործունեությամբ նպաստում է նաև կադրերի պատրաստմանը: Վերջին տարիներին գիտության տարբեր ճյուղերի պատմության վերաբերյալ թեմաներով պաշտպանվել են զոկտորական և թեկնածուական մի շարք գիտնականներ:

Ներկայումս խորհուրդը նախապատրաստական աշխատանքներ է տանում 1976 թ. Բաքվում կայանալիք անդրկովկասյան կոնֆերանսին և գիտության պատմության միջազգային XV կոնգրեսին մասնակցելու համար (վերջինս տեղի կունենա 1977 թ. Էդինբուրգում):

Խորհրդի առաջիկա խնդիրներից հիմնականն է՝ ստեղծել աշխատություններ այն գիտությունների պատմության գծով, որոնց վերաբերյալ առայժմ չկան առանձին մենագրություններ և ապա եղած բոլոր աշխատությունների հիման վրա տալ բնագիտության սկզբնավորման ու զարգացման ամբողջական պատմությունը Հայաստանում մինչև սովետական կարգերի հաստատումը: Սովետական շրջանի պատմությունը նախատեսվում է տալ առանձին գրքով, որը կընդգրկի 60-ամյա շրջան (1920—1980 թթ.):

Պրոֆ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹՈՐՈՍ ԱԶԱՏՅԱՆԻ ՀԱՎԱՔԱՄՈՒՆ

Պոլսահայ նշանավոր գրող, բանասեր և մշակութային գործիչ Թորոս Ազատյանի (1898—1955) արխիվային նյութերի հավաքածուն Հայաստանի Դրականության և արվեստի թանգարան է տեղափոխվել 1957 թ. նրա այրու տիկին Շուշանիկ Ազատյանի, եղբոր՝ Վահան Ազատյանի և պոլսահայ մտավորականության սիրալիր օժանդակությամբ:

Հավաքածուն ընդգրկում է 15000-ից ավելի

վավերագրեր, որոնք բնութագրում են ը. Ազատյանին որպես գիտական-պատմական վավերագրերի բազմահմուտ հավաքչի:

Թ. Ազատյանը 1920—1950-ական թթ. հրատարակել է երկու տասնյակից ավելի գրքեր՝ «Աղբյուր անմահության» բանաստեղծությունների 3 հատորները, «Զմրուխտե պատմության» խորագրով պատմվածքների, արձակ բանաստեղծությունների և հեքիաթների ժողովածուն և այլ գեղարվեստական գործեր, մենագրություններ Կոմիտասի, Միսաք Մեծարենցի և այլ մշակութային գործիչների մասին, պատմական հետազոտություններ Պոլսի հայկական վարժարանների, ամիրայական տների, պարբերական մամուլի վերաբերյալ: Նրա գրչին են պատկանում «Ակն ու ակնեցիք» ուշագրավ ազգագրական աշխատությունը, տարեգրքեր, հուշամատյաններ, հուշագրություններ, ուղեգրություններ: Միևնույն ժամանակ նա եռանդուն մասնակցություն է բերել պոլսահայ մամուլին. երեք տասնյակից ավելի պարբերականներում տպագրել է հարյուրավոր հոդվածներ հայ գրականության անցած ու ժամանակակից դեմքերի

⁸ «Вопросы истории науки», Ереван, 1967; «Труды IV Закавказской конференции по истории науки», Ереван, 1974.

¹ Այսպիսի հայրենասիրական լավ գործ են կատարում նաև Լիբանանի, Եգիպտոսի, Իրանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի առաջադիմական կազմակերպությունները, խմբագրությունները, առաջավոր մտավորականությունը, որի շնորհիվ տարեց-տարի աճում են Հայաստանի Դրականության և արվեստի թանգարանի ֆոնդերը՝ գաղափար տալով սփյուռքահայ գրական, թատերական և երաժշտական կյանքի մասին:

ստեղծագործության, թատրոնի, երաժշտության, պատմության և գիտության տարբեր բնագավառներում հայ գործիչների ներդրման մասին: Հավաքածուն ընդգրկում է այդ բաղմակողմանի ստեղծագործական աշխատանքի համար օգտագործված հարուստ նախանյութը:

Ազատյանը հավաքել է հայոց լեզվին, գրականությանը, արվեստին, պատմությանը, մանկավարժությանը, արհեստներին, վաճառականությանը վերաբերող անսպառ նյութ, այդ բոլորը ձեռք է բերել իր սուղ դրամական միջոցներով և կորստից փրկելով սերունդների սեփականությունն է դարձրել: Դա նրա ամենախոշոր ծառայություններից մեկն է հայրենի մշակույթին:

Պատմաբանը և տնտեսագետը այս հավաքածուի մեջ կգտնեն Հայոց Ազգային սահմանադրության նախնական տարբերակը, դրա՝ թուրքական արքունիքի կողմից վավերացված օրինակը, Սահմանադրության հիման վրա ընտրված Ազգային ժողովի, նրա օժանդակ մարմինների, լիազակտի խորհուրդների, ինչպես և Պատրիարքարանի 1870—1915 թթ. գործունեությանը վերաբերող արձանագրություններ, տեղեկագրեր, տարրեր համայնքների անունից գրված և պատրիարքարանի միջոցով Օսմանյան արքունիք ներկայացված թագրիւններ (բողոքագրեր), ազգային ճնշման փաստերի մասին տեղեկում կազմված արձանագրություններ, թուրքական, ռուսական, իսպանական, ֆրանսիական կառավարությունների հրավարտակներ՝ հայկական համայնքներին և առանձին գործիչների տրված առանձնաշնորհումների մասին, կաթողիկոսական կոնդակներ, վիճակագրական տեղեկություններ հայկական մարզերի բնակչության ունեցվածքային վիճակի, այդ մարզերում գոյություն ունեցող հարկային քաղաքականության վերաբերյալ, ինչպես և ամբողջ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող պատմական հուշարձանների նկարագրություններ, հատակագծեր, տվյալներ ոսկերչության, գորգագործության և այլ արհեստների դարդաքանան մասին:

Լեզվաբանական նյութերի մեջ առանձին ուշադրություն են դրավում Սեբաստիայի, Մալկարայի, Բալուի, Կիրասունի, Հաճնի, Մարզվանի, Քղիի, Այնթապի և այլ գավառների խոսվածքների բառանյութի, քերականական կառուցվածքի, հնչյունաբանության վերաբերյալ տարբեր անձանց կողմից մոտ մեկ հարյուրամյակի ընթացքում կատարված գրառումներն ու հետազոտությունները, արաբերեն—հայերեն, պարսկերեն—հայերեն, անգլերեն—հայերեն, ֆրանսերեն—հայերեն, սանսկրիտ—հայերեն ձեռագիր բառարաններ (երբեմն թերի), դրուցարաններ, XIX դարի առաջին տասնամյակներում

արևմտահայ դպրոցներում օգտագործված քերականության ձեռագիր դասագրքեր և այլն:

Մեծ թիվ են կազմում մանկավարժական բնույթի նյութերը. այստեղ են Պոլսում, Բլմիրում, Կաբինում, Վանում, Խարբերդում, Տիգրանակերտում և այլուր գոյություն ունեցած հայկական դպրոցների պատմությամբ՝ վերաբերող վավերագրեր, «Հայրենասեր», «Պարթևյան», «Միացյալ», «Վասպուրական» և այլ կրթասիրական ընկերությունների, ինչպես և Ազգային կենտրոնական վարչության ուսումնական խորհրդի կանոնադրություններ, դպրոցական ծրագրեր, մի շարք մանկավարժների գործունեության բնութագրության, նրանց մանկավարժական սկզբունքների նկարագրության և արժեքավորման փորձեր:

Անցյալ դարի մտավորականների ժառանգներից ձեռք բերած նյութերի մեջ մեծ թիվ են կազմում օրագրություններն ու հուշագրությունները: Այդ տեսակետից արժեքավոր են Պոլսի պատրիարքական տեղապահ, բանասեր Հովհաննես ավագ քահանա Մկրյանի 1876—1906 թթ. օրագրությունների ծոցատետրերը, որտեղ կարևոր վկայություններ կան իր ժամանակակից արևմտահայ մի շարք նշանավոր գործիչների մասին:

Կրող, բանասեր ու մանկավարժ Հրանտ Ասատուրին պատկանող նյութերի մեջ ուշադրություն են դրավում նրա «Իմաստասիրական բառարանի» 20 ծրարները. դա հայ իրականության մեջ փիլիսոփայական ընդարձակ բառարան ստեղծելու առաջին անավարտ, բայց լուրջ փորձերից է: Անավարտ ու անտիպ է մնացել նաև նույն հեղինակի XIX դարի պոլսահայ մտավոր կյանքի պատմությանը նվիրված ծավալուն աշխատությունը:

Շատ են անցյալ դարի 70—80-ական թթ. հայ թատրոնի և երաժշտության պատմության հարցերին վերաբերող նյութերը՝ ձեռագիր պիեսներ, ներկայացումների աֆիշներ և հայտագրեր, պոլսահայ և թուրքական թատրոնի հիմնադիր Հակոբ Վարդուկյանի և ուրիշների գործունեությունը բնութագրող վավերագրեր:

Հարուստ նյութ կա հայ բանահյուսության մասին՝ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում գրի առնված հեքիաթներ, ավանդություններ, առակներ, առածներ, երգեր, որոնց մի մասը ժամանակին օգտագործվել է Պոլսում լույս տեսած «Բյուրական» ազգագրական հանդեսում: Մեծ թիվ են կազմում հայատառ թուրքերեն աշուղական երգերի ժողովածուները: Առանձին ուշադրության է արժանի 1842 թ. Դերջանում տիրացու Սահակի ձեռքով ընդօրինակված 350 մեծադիր էջերով կաշեկազմ երգարանը, որի մեծ մասը դբաղեցնում են աշուղ Ակյահի, Սերունիի երգերը՝ աշուղական արվեստ

տի լուրոր ժանրերով: Կան նաև աշուղների երիտարի, Իսպիրի, Ջարուրի, Ջերի, Լուֆթի, Աղատ Գալֆալի, Բերիշանի երգերը: Այդ նյութերի հիման վրա Թ. Աղատյանը 1930-ական թթ. գրադրվել է թուրքերենով ստեղծագործող հայ աշուղների գործերի ուսումնասիրության մասին նախատեմա վրա, որ հավաքած նյութը, լատինատառ թուրքերենով մեքենագրել XV—XIX դդ. 150 հայ աշուղների գործերը, կազմել յուրաքանչյուրի համառոտ կենսագրությունը, այս արժեքավոր աշխատությունը չի տպագրվել: Ժողովածուն հայ մշակույթի պատմության հիշյալ բնագավառի ուսումնասիրության միակ համահավաք աղբյուրն է:

Թ. Աղատյանի հավաքածուի մեջ հաշվվում է 13 լագար նամակ. դրանք մեծ մասամբ XIX դարի սկզբից մինչև ներկա դարի 30-ական թթ. հայ մշակույթի, կրոնական, քաղաքական, հասարակական գործիչների նամակներն են բազմապիսի հարցերի վերաբերյալ, որոնց մեջ արտացոլված են մոտ երկու հարյուրամյակի ընթացքում հայ հասարակական միտքը հուզող լուրոր հարցերը՝ ազգային-ազատագրական շարժման զրկվածներ, հայկական հարցի պատմության վավերագրեր: Եթե հայ կաթողիկոսների, Պոլսի, Երուսաղեմի պատրիարքների, հասարակական գործիչներ Գարրիել Նորատունկյանի, Կարապետ Եղյանի, Հարություն Տատյանի նամակներն ու գրությունները արժեքավոր են հասարակական-քաղաքական կյանքի ճանաչողության տեսակետից, ապա Գարեգին Սրվանձտյանի, Թովմաս Թերզյանի, Հովսեփ Շիշմանյանի,

Երվանդ Ուռյանի և այլ մտավորականների նամակները պարիս են լույս սփռելու արևմտահայ մշակութային կյանքի բազմաթիվ մութ հարցերի վրա:

Անհրաժեշտ է նշել, որ այս հավաքածուի շնորհիվ համալրվեց թանգարանում պահվող արևմտահայ գրողների ինքնագրերի թիվը. թանգարանի համար մեծ արժեք ունեն Մկրտիչ Պեշկևաճյանի, Նահապետ Թումանյանի, Հարություն Մամբրյանի, Թուրք Որբերյանի, Թուրք Սեակի, Եղիա Տեմիրճիպաճյանի ինքնագրերը, որպիսիք մինչ այդ թանգարանը չուներ:

Անցած 17 տարիների ընթացքում այս հավաքածուն լայնորեն օգտագործվել է Հայաստանի և եղբայրական հանրապետությունների գիտնականների կողմից հայ ժողովրդի անցյալի, նրա գրականության, արվեստի, մամուլի, պատմության, այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային կապերի ուսումնասիրության համար:

Հարուստ է նաև Թ. Աղատյանի արխիվին կից հայագիտական գրադարանը, որն ունի հայերեն, հայատառ, արաբատառ, լատինատառ թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն 3500 գիրք. հայերենների թվում կան տասնյակ հնատիպ հազվագյուտ գրքեր, որոնք լույս են տեսել հայ տպագրության սկզբնավորման շրջանում՝ 1512—1800 թթ.: Գրադարանը ևս նպաստում է հայ ժողովրդի հոգևոր մշակույթին վերաբերող բազմաթիվ հարցերի ուսումնասիրությանը:

Գ. ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Մատենագիտություն, 1973)

Jes P. Asmussen, Der apokryphe dritte Korintherbrief in der armenischen Tradition, *Acta Orientalia* (Copenhagen), vol. 35 (1973), p. 51—55.

G. Badridzé, Deux études pour servir à l'histoire du Tao. I. Observations concernant le Testament d'Eustathius Boilas. II. Codicille du manuscrit arménien „La Légende de la Ville de cuivre.“ *Bedi Kartlisz* (Paris), vol. 31 (1973), p. 167—186.

M.-L. Chaumont, Conquêtes Sassanides et Propaganda Mazdéene, *Historia* (Wiesbaden), vol. 22 (1973), p. 664—710 [Տե՛ս հատկապես § II, A. Conquêtes en Transcaucasie, p. 684—692; B. Propagande mazdéene et cultes nationaux: Arménie, Iberie, Albanie, p. 701—709].

P. Cuneo, Le Basiliche paleocristiane

armene, *XX Corso di cultura sull'arte ravennate e bizantina*, Ravenna, 1973, p. 217—239.

P. Cuneo, Le Chiese paleocristiane armene a pianta centrale, *XX Corso di cultura sull'arte ravennate e bizantina*, Ravenna, 1973, p. 241—262.

Я. Дашкевич, Э. Трыярска, Армяно-кипчацкая надпись из Львова (1609 г.) и вопросы изучения средневековых памятников армянской эпиграфики, *Roznik Orientalistyczny* (Warsaw), vol. 35 (1972—3), p. 123—135.

F. De Maiffei, L'origine della cupola armena, *XX Corso di cultura sull'arte ravennate e bizantina*, Ravenna, 1973, p. 287—307.

F. De Maiffei, Rapporti tra l'architettura